ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր մասնագետի /2.3-1/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Աշխատակազմի գլխավոր մասնագետը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, իրականացնում է ֆինասական գործառույթները, կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, մասնակցում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին, իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման,փաստաթղթերի կազմման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման,ամփոփ-ման և ներկայացման աշխատանքները: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորու-թյուններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

-Բարձրագույն մասնագիտական կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազ երկու տարվա ստաժ կամ վերջին երկու տարվա ընթացքում համայնքի ղեկավարի ինչպես նաև հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

-Իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

-Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2017թվականի նոյեմբերի 24 –ին, ժամը 1200 -ին Գայի համայնքապետարանի շենքում:

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս:

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի /բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից / պատճեները բնօրինակների հետ միասին:

-արական սեռի անձիք զինվորական գրքույկի, կամ դրան փոխարինող վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք:

-մեկ լուսանկար 3X4 չափի:

-անձնագրի պատճենը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր / բացի շաբաթ և կիրակի օրերից /ժամը 1000 -ից մինչև 1600:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է ‘08’ նոյեմբերի 2017թվական:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկու-թյուններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ, Գայի համայնքապետարան Խաչատրյան 1, հեռ. 0231 6-01-36 և Արմավիրի մարզպետարան ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. 0231 2-76-49 կամ 0231 2-07-70: